ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՁԵՌՆԱՐԿ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանին է հասել սովորողը: Այդ տեղեկությունների համար աղբյուր են գրավոր թեսթերի արդյունքները, տնային առաջադրանքի կատարման մակարդակը, լաբորատոր և գործնական, հետազոտական բնույթի գրավոր այլ աշխատանքները, նախագծերը, բանավոր հարցումները, կիսամյակային միավորային աշխատանքները և ուսուցանող գնահատման ուղղությամբ արված աշխատանքների մասին գրանցումները: «Գնահատում» տերմինը մինչ այժմ հիմնականում օգտագործել ենք չափման իմաստով, չենք տարբերակել «գնահատում» ու «գնահատական տալ» արտահայտությունների իմաստները, բայց ներկայումս այն ձեռք է բերել այլ իմաստներ: Ուսումնական գործընթացում գնահատումը նշանակում է նաև քանակական ու որակական տվյալների նպատակային հավաքում: Ուստի, դա ավելի լայն ընդգրկում ունի, քան չափումը, որն արտահայտվում է կրեդիտներով:

Սույն ձեռնարկը հնարավորություն կընձեռնի դասախոսներին նախ գնահատել սովորողների գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, հետո որոշել կուտակվող կրեդիտների համար նախատեսված ծանրաբեռնվածությունը:

Co-funded by the Tempus Programme of the European Union

GOVERN
FOSTERING AUTONOMY AND ACCOUNTABILITY: DEVELOPMENT OF STATE-OF-THE-ART HE MANAGEMENT SYSTEM FOR EFFICIENT CHANGES IN LINE WITH BOLOGNA PRINCIPLES

Ձեռնարկը մշակվել է ՏԵՄՊՈՒՍ-ԳՈՎԵՐՆ ծրագրի «Կառավարման համակարգի արդյունավետ կառուցվածքային փոփոխությունների իրականացումը Բոլոնիայի սկզբունքների հիման վրա» նախագծի շրջանակներում:

1. Միավորային և ուսուցանող գնահատումներ

Ուսուցանող գնահատումն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և սովորաբար ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ դասախոսի կողմից սովորողին արված առաջարկություններով, դիտողություններով և/կամ մեկնաբանություններով:

Միավորային գնահատում, որը կիրառվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի (թեմաների) յուրացման աստիճանը ստուգելիս, և որն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու, հաշվառելու միջոցով:

Միավորային	**Ուսուցանող**
Իրականացվում է ուսուցման ավարտին	Իրականացվում է ուսուցման ընթացքում
Գնահատմանն ուսումնական աշխատանք չի հետևում	Հետևում են ուսման որակի բարելավման աշխատանքներ
Առաջադիմության արձանագրում	Սովորողի ուժեղ և թույլ կողմերի բացահայտում
Անհրաժեշտ է բարձր հուսալիություն	Անհրաժեշտ է բովանդակային հավաստիություն
Ունի բարձր համարում՝ արժեք	Ունի հարաբերականորեն ցածր համարում՝ արժեք
Տրվում են միավորներ	Միավորներով կամ նիշերով չի գնահատվում
Հարցերը փակ բնույթի են	Հարցերը հիմնականում բաց են
Հիմնականում անհատական աշխատանք է	Համագործակցային աշխատանք է կամ քննարկում

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը

1. Հյուսիսային համալսարանում բակալավրի կրթական աստիճանում՝
   - առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի,
   - հեռակա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1440 ժամ, որը համարժեք է 48 ECTS կրեդիտի:
2. Հյուսիսային համալսարանում մագիստրոսի կրթական աստիճանում
   - առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի,
   - հեռակա ուսուցմամբ ուսանողի ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 3600 ժամ՝ 2.5 տարվա կտրվածքով, որը համարժեք է 120 ECTS կրեդիտի, որից միայն 48 ECTS կրեդիտը ուսանողը կուտակում է գիտահետա-զոտական կրթամասից:
3. ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:
4. Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական աստիճանում ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից 34-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային:
5. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:

6. Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը 1-7 կիսամյակներում կազմում է 26-30 ժամ[1]:
7. Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:
8. Հեռակա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 24 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 48 կրեդիտ:
9. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է:

3. Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

3.1 Համակարգի հիմնադրույթները

Հյուսիսային համալսարանում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր, բարձրացնել ուսանողների մնացորդային գիտելիքների մակարդակը և բարելավել դասահաճախումները,

բ) ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և

[1] Առանց ֆիզդաստիարակության պարապմունքների:

ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

Խրախուսվում է դասընթացի վերջնարդյունքների գնահատման (ինչպես նաև դրանց սահմանման) գործընթացում Բենջամին Բլումի կողմից առաջարկված հետևյալ մակարդակների կիրառումը՝

- նյութի ճանաչում
- մեկնաբանում
- կիրառում
- վերլուծություն
- համադրություն
- գնահատում

Գիտելիքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները՝

ա) դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում դասահաճախումների և լսարանում նրա ակտիվության հաշվառման օգնությամբ,

բ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների (ռեֆերատներ, պրեզենտացիաներ, ստուգողական աշխատանքներ, թեմատիկ զեկույցներ) կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (միջանկյալ քննություններ և ստուգումներ),

գ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում,

դ) ստուգման արդյունքների ինտեգրում՝դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ակտիվության, ընթացիկ և

եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և, հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական գիտելիք-ների և կարողությունների ձևավորման մեջ, դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

ա) *եզրափակիչ գնահատումով դասընթացներ /քննություն/,*
բ) *եզրափակիչ գնահատումով դասընթացներ /ստուգարք, տարբերակված ստուգարք/:*

3.2 Գիտելիքների վերահսկման ձևերը

Հյուսիսային համալսարանում կրեդիտային ուսուցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում կիրառվում են ուսանողների գիտելիքների վերահսկման և գնատաման հետևյալ ձևերը.

- ընթացիկ ստուգում,
- միջանկյալ հարցում և գնահատում,
- եզրափակիչ հարցում և գնահատում (քննություն և ստուգարք):

3.3 Գնահատման մեթոդաբանությունը

Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի պահանջների համաձայն, արդյունարար գնահատման չափելի-ությունը, մնացորդային գիտելիքների, հմտությունների և կարողությունների արժևորումն ապահովելու նպատակով՝ Հյուսիսային համալսարանում ներդրված է ուսանողների գիտե-լիքների գնահատման հետևյալ կարգն ու մեթոդաբանությունը:

Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրում յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում կարող է ներառվել եզրափակիչ գնահատումով առավելագույնը 5 մասնագիտական դասընթաց (հեռակայում՝ 5 մասնագիտական դասընթաց).

- եզրափակիչ գնահատումով դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն,
- եզրափակիչ քննությունը հիմնականում անցկացվում է բանավոր, իսկ որոշ դեպքերում նաև գրավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից։

Մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված

- եզրափակիչ գնահատումով դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 1 ընթացիկ (միջանկյալ) քննություն,
- եզրափակիչ քննությունը հիմնականում անցկացվում է բանավոր, իսկ որոշ դեպքերում նաև գրավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից։

Հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված

- եզրափակիչ գնահատումով դասընթացներն ավարտվում են եզրափակիչ քննությամբ (միջանկյալ քննություններ նախատեսված չեն),
- եզրափակիչ քննությունները հիմնականում անցկացվում են բանավոր, իսկ որոշ դեպքերում նաև գրավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից,

ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից:

4. Գիտելիքների գնահատման կարգը

1. Հյուսիսային համալսարանում կրեդիտային համակարգով կազմակերպվող բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների կիսամյակային գիտելիքի արդյունարար գնահատման համար կիրառվում է գնահատման 100 միավորանոց համակարգ/սանդղակ: Գնահատումը կատարվում է ինչպես թվային այնպես էլ տառային նշագրումով, ընդ որում, կիրառվում է գնահատման հետևյալ սկզբունքը՝ ***0-40*** միավոր՝ «անբավարար», ***41-59*** ՝ «բավարար», ***60-79*** ՝ «լավ», ***80-100*** ՝ «գերազանց»:
2. Օգտագործվող գնահատման սանդղակը հնարավորություն է տալիս հաշվարկել կիսամյակի և ուսումնառության ողջ շրջանի ընթացքում ուսանողի վաստակած վարկանիշային միավորը, ինչպես նաև՝ ուսանողի միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կիսամյակի և ուսումնառության ցանկացած ժամանակահատվածի համար՝ ուսանողի բացարձակ առաջադիմության չափման նպատակով (Աղյուսակ 1):
3. Առկա ուսուցմամբ բակալավրի ուսումնական կիսամյակի տևողությունը սահմանվում է 20 շաբաթ, որը բաժանվում է տեսական ուսուցման (և պրակտիկայի, եթե այդպիսին նախատեսված է ուսումնական պլանով (ընդհանուր առմամբ 17 շաբաթ))՝ համապատասխանաբար 8 և 9 /8/ շաբաթ տևողությամբ երկու փուլերի (յուրաքանչյուր փուլն ավարտվում է բոլոր քննական առարկաներից անցկացվող միջանկյալ քննությամբ) և 3 /4/ շաբաթ տևողությամբ կիսամյակային քննաշրջանի:
4. Բոլոր ուսանողները (առկա և հեռակա ուսուցման ձևերով սովորող) պարտավոր են մասնակցել տվյալ կիսամյակում ուսումնական պլանով նախատեսված առարկաներից յուրաքանչյուրի ***եզրափակիչ հարցմանը,*** որը կարող է անցկացվել եզրափակիչ քննության, ստուգարքային ամփոփիչ հարցման և կուրսային աշխատանքի/նախագծի հաշվետվությունների պաշտպանության

(կիսամյակի 17-րդ շաբաթվա ընթացքում), պրակտիկայի հաշվետվությունների պաշտպանության (պրակտիկայի ավարտից հետո ուսումնական գործընթացի 10 օրվա ընթացքում) ձևով:

5. Արդյունարար գնահատականի բաղադրամասերը

1. Յուրաքանչյուր ***քննական*** առարկայի կիսամյակային ընդհանուր արդյունարար գնահատականի (միավորի) մեջ առաջին միջանկյալ քննության չափաբաժինը կազմում է ***15*** միավոր, երկրորդ միջանկյալ քննությանը՝ ***15*** միավոր, հաճախումներինը՝ ***10*** միավոր /բոնուսային միավորներ 0÷40 միջակայքում/, իսկ եզրափակիչ քննության չափաբաժինը՝ ***60*** միավոր (տեքստում այսուհետ բերված են առավելագույն թվային միավորները):

Քննությամբ ավարտվող առարկայի/մոդուլի համար (բակալավրի առկա ուսուցման ձև)

հհ	***Գործոններ***	***Միավորներ***
1	Հաճախումներ	**10**
2	1-ին միջանկյալ քննություն	**15**
3	2-րդ միջանկյալ քննություն	**15**
4	Եզրափակիչ քննություն	**60**
	Ընդամենը	**100**

Քննությամբ ավարտվող առարկայի/մոդուլի համար (բակալավրի հեռակա ուսուցման ձև)

հհ	***Գործոններ***	***Միավորներ***
1	Հաճախումներ	**10**
2	Ստուգողական աշխատանքներ (եթե ուսումնական պլանով նախատեսված է) Ինքնուրույն աշխատանք	**30**
3	Եզրափակիչ քննություն	**60**
	Ընդամենը	**100**

Քննությամբ ավարտվող առարկայի/մոդուլի համար (մագիստրատուրայի առկա ուսուցման ձև)

հհ	***Գործոններ***	***Միավորներ***
1	Հաճախումներ	**10**
2	Միջանկյալ քննություն	**30**
3	Եզրափակիչ քննություն	**60**
	Ընդամենը	**100**

2. Յուրաքանչյուր ***ստուգարքային*** առարկայի կիսամյակային ընդհանուր արդյունարար գնահատականը դասավանդողի կողմից ամրագրվում է ստուգարքային տեղեկագրում («ստուգված» /S/ կամ «չստուգված» /U/)՝ հաշվի առնելով կիսամյակի ընթացքում ուսանողի ցուցաբերած արդյունքներն ըստ համապատասխան չափաբաժինների (հաճախումներ՝ ***10*** միավոր, ակտիվ մասնակցություն սեմինարներին, տնային գործնական հանձնարարությունների կանոնավոր կատարում, մասնակցություն դասախոսի խորհրդատվություններին, հանձնարարված գրականության հետ աշխատանք և այլն՝ ***30*** միավոր /բոնուսային միավորներ 0÷40 միջակայքում/, ամփոփիչ հարցում՝ ***60*** միավոր):

Ստուգարքով ավարտվող մոդուլների համար

հհ	***Գործոններ***	***Միավորներ***
1	Հաճախումներ	**10**
2	Ակտիվություն (գործնական պարապմունքներին, աշխատանք հանձնարարված գրականության հետ և այն)	**30**
3	Ամփոփիչ հարցում	**60**
	Ընդամենը	**100**

3. Յուրաքանչյուր ***կուրսային աշխատանքի/նախագծի*** կիսամյակային ընդհանուր արդյունարար գնահատականի մեջ աշխատանքի ձևավորման որակի չափաբաժինը կազմում է ***10*** միավոր, կիսամյակի ընթացքում համաչափ աշխատանքի չափաբաժինը ***30***

միավոր /բոնուսային միավորներ 0÷40 միջակայքում/, իսկ պաշտպանությանը՝ ***60*** միավոր:

Կուրսային աշխատանք

հհ	***Գործոններ***	***Միավորներ***
1	Ձևավորման որակ	**10**
2	Կիսամյակի ընթացքում համաչափ աշխատանքի չափաբաժինը	**30**
3	Պաշտպանություն	**60**
	Ընդամենը	**100**

4. ***Պրակտիկաների*** (ուսումնական և արտադրական) ընդհանուր արդյունարար գնահատականի մեջ հաշվետվության ձևակերպման որակի չափաբաժինը կազմում է ***10*** միավոր, պրակտիկայի վայրից գնահատականի չափաբաժինը ***30*** միավոր /բոնուսային միավորներ 0÷40 միջակայքում/, իսկ հաշվետվության պաշտպանությանը՝ ***60*** միավոր: Հարգելի պատճառով պրակտիկայի չմասնակցած ուսանողին հնարավորություն է ընձեռնվում պրակտիկայի գնալ դասերից դուրս՝անհատական գրաֆիկով:

Պրակտիկաներ (ուսումնական և արտադրական)

հհ	***Գործոններ***	***Միավորներ***
1	Հաշվետվության ձևակերպում	**10**
2	Պրակտիկայի վայրից գնահատականի չափաբաժին	**30**
3	Հաշվետվության պաշտպանություն	**60**
	Ընդամենը	**100**

5. Վերոհիշյալ բաղադրամասերի յուրաքանչյուրի փաստացի մեծությունից ելնելով որոշվում է տվյալ առարկայից ուսանողի կիսամյակային /արդյունարար/ գնահատականը:

6. Միջանկյալ և ամփոփիչ հարցումների գնահատում

1. Կիսամյակի երկու փուլերից յուրաքանչյուրն ավարտվում է բոլոր քննական առարկաներից անցկացվող ատեստավորմամբ՝ միջանկյալ քննություններով: Կիսամյակի 8-րդ շաբաթվա ընթացքում անցկացվում են I միջանկյալ քննությունները, իսկ 17 /16/-րդ շաբաթվա ընթացքում՝ II միջանկյալ քննությունները (տվյալ կիսամյակում պրակտիկայի առկայության դեպքում՝ ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի): Միջանկյալ քննությունները, որոնց ընթացքում ուսանողները չեն ազատվում պարապմունքներից, ամփոփում են տվյալ փուլն ամբողջ խորությամբ և ծավալով: Դրանց անցկացման բանավոր կամ գրավոր ձևը, ինչպես նաև հարցատոմսերում ընդգրկված հարցերի քանակն ու նրանց կշռային միավորները որոշում է համապատասխան ամբիոնը՝ ելնելով դասընթացի առանձնա-հատկություններից:
2. Առաջին, ապա երկրորդ փուլերի միջանկյալ ատեստավորումների արդյունքները դասավանդողի կողմից ամրագրվում են քննական տեղեկագրում և ներմուծվում են ուսանողների գիտելիքների գնահատման էլեկտրոնային բազա:
3. Միջանկյալ քննությունների երկրորդ փուլի արդյունքների ամփոփմանը զուգընթաց դասավանդողը քննական տեղեկագրի համապատասխան մասում տվյալներ է լրացնում նաև ուսանողի հաճախումների մակարդակի վերաբերյալ՝ գնահատելով ***10*** միավորանոց համակարգով:
4. ***Միջանկյալ քննության*** ժամանակ առավելագույն 15 միավորներից 5 միավորը անհրաժեշտ է նախատեսել ուսանողի ուսումնառության տվյալ փուլում կատարած ընթացիկ աշխատանքների հաշվառման համար /ակտիվ մասնակցություն սեմինարներին, տնային գործնական հանձնարարությունների կանոնավոր կատարում, մասնակցություն դասախոսի

խորհրդատվություններին, հանձնարարված գրականության հետ աշխատանք և այլն/:

5. Եզրափակիչ հարցման արդյունքում /կարելի է զուգորդել որոշ հարցերի գրավոր տարբերակների հետ/ դրական ատեստավորում ստանալու համար, ուսանողը ***60*** առավելագույն միավորներից պետք է վաստակի առնվազն ***25*** միավոր: Այդ դեպքում ուսանողի արդյունարար գնահատականը հաշվվում է որպես եզրափակիչ հարցմանը վաստակած միավորների և կիսամյակի ընթացքում հավաքած բոնուսային միավորների գումար: Եթե այդ գումարը ***41*** միավոր է կամ ավելի, ապա տվյալ դասընթացը ուսանողի կողմից համարվում է հանձնած և ուսանողը ստանում է համապատասխան կրեդիտը: Եթե եզրափակիչ հարցման ժամանակ ուսանողի վաստակած միավորների քանակը փոքր է ***25***-ից, ապա կիսամյակի ընթացքում հավաքած բոնուսային միավորները չեն գումարվում վերջինիս, և ուսանողի արդյունարար գնահատականը համարվում է «անբավարար», նա հայտնվում է փորձաշրջանում (պարտքերի մարման շրջանում) և պարտավոր է դեկանատի կողմից սահմանված ժամկետներում հանձնել ամբողջ դասընթացը:

Եզրափակիչ հարցմանը հատկացված առավելագույն ***60 միավորներից 45 միավորը*** պետք է հատկացնել ուսանողների գիտելիքների ու կարողությունների գնահատմանը, իսկ ***15 միավորը*** պետք է հատկացնել այնպիսի բանավոր հարցերին, որոնք նոր իրավիճակ են ստեղծում ուսանողին առաջադրված հարցերի մեջ: Դա թույլ կտա ստուգել, թե ուսանողը որքանով է կարողանում վերլուծել, համադրել, եզրահանգումներ անել, պաշտպանել իր տեսակետը…, որը և թույլ կտա գնահատել ուսանողի կողմից ձեռք բերված հմտությունները:

6. Փորձաշրջանում ուսանողի գնահատումը կատարվում է կիսամյակային եզրափակիչ հարցման ընթացակարգով՝ բոնուս-միավորների հաշվառմամբ:

7. Փորձաշրջանի I փուլը ձախողած ուսանողը հայտնվում է փորձաշրջանի II փուլում, որը անցկացվում է փորձաշրջանի I փուլի սկզբունքով:
8. Փորձաշրջանի երկու փուլերի ձախողումը նշանակում է դասընթացի լիակատար ձախողում:
9. Եթե ուսանողը ուսումնառության սկզբից մինչ այդ պահը ձախողել է այնքան դասընթացներ, որոնց հատկացված կրեդիտների քանակը գերազանցում է *12*-ը, ապա նա հեռացվում է համալսարանից կամ կրկնում է ուսումնառությունը նույն կուրսում կամ էլ պայմանականորեն տեղափոխվում է հաջորդ կիսամյակ և կրկնում ձախողած դասընթացները՝ այսպիսով ունենալով ավելի մեծ ծանրաբեռնվածություն, քան իր համակուրսեցիները:

Գնահատման սանդղակը և նշագրումը

Հյուսիսային համալսարանում կրեդիտային համակարգի պայմաններում սովորող ուսանողների գիտելիքների որակի գնահատման տարբերակված համակարգի սանդղակ

(Աղյուսակ 1)

Ավանդական	Տառային գնահա-տական	Թվային գնահատակ ան	Ուսանողների գիտելիքների նկարագիր
Գերազանց	**A+**	**94-100**	Հիանալի գիտելիքներ՝ առանց սխալների և բացթողումների
	A	**87-93**	Հիանալի գիտելիքներ՝ սխալների և բացթողումների եզակի երկրորդական դեպքերի առկայությամբ
	A-	**80-86**	Գերազանց գիտելիքներ՝ երկրորդական սխալների և բացթողումների թույլատրելի քանակության առկայությամբ

Լավ	**B+**	**74-79**	Լավ արդյունք, առկա են երկրորդական սխալների և բացթողումների եզակի դեպքեր
	B	**67-73**	Լավ-ընդհանուր առմամբ առկա են հիմնական սխալների և բացթողումների եզակի դեպքեր
	B-	**60-66**	«միջինից բարձր» գիտելիքներ, առկա է հիմնական սխալների և բացթողումների թույլատրելի քանակություն «լավ» գնահատականի համար
Բավարար	**C+**	**54-59**	գիտելիքների ընդունելի մակարդակ՝ էական թերություններով հանդերձ
	C	**47-53**	գիտելիքների ընդունելի մակարդակ՝ լուրջ թերություններով հանդերձ
	C-	**41-46**	«միջինից ցածր», սակայն բավարար գիտելիքներ՝ իմանալու համար դասընթացի հիմնական հասկացությունները: Առկա են մի շարք հիմնական և երկրորդական սխալներ:
Անբավարար	**D**	**0-40**	շատ թույլ գիտելիքներ, որոնք բավարար չեն դասընթացի հիմնական հասկացությունների իմացության համար, առկա են մեծ քանակությամբ հիմնական սխալներ և բացթողումներ
Չներկայացած	**I**	-	Ուսանողի բացակայության դեպքում
Ստուգված	**S**	-	Գիտելիքների որոշակի ծավալ, *որն անհրաժեշտ է դրական ատեստավորման* համար
Չստուգված	**U**	-	Գիտելիքների բացարձակ անընդունելի մակարդակ

Հաշվի առնելով առարկայի յուրահատկությունները սույն գնահատման կարգի համապատասխան՝ դասախոսը կարող է մշակել գնահատման իր չափանիշները:

<u>Նմուշ-օրինակ (Ֆինանսական իրավունքի առարկայի)</u>

<u>Գնահատման կարգը</u>

Գնահատումն իրականացվում է առաջին, երկրորդ միջանկյալ և վերջնական քննության և հաճախումների համար տրված հանրագումարով: Վերջնական քննության ամենաբարձր գնահատականը 100 միավորն է: Առաջին և երկրորդ միջանկյալ քննությունների ամենաբարձր գնահատականը 15 միավորն է: Լիարժեք հաճախումներին տրվում է 10 միավոր, վերջնական քննությանը առավելագույնը տրվում է 60 միավոր: Սովորողի գնահատականը որոշվում է հետևյալ կերպ՝
պայմանականորեն առաջին միջանկյալ քննությունը նշենք **$Մ_1$,** երկրորդ միջանկյալը՝ **$Մ_2$**, հաճախումները՝ **Հ**, վերջնական քննությունը՝ **$Վ_ք$**: Արդյունքում սովորողի գնահատականը որոշվում է՝ $Մ_1+Մ_2+Հ+Վ_ք$ (այսուհետ՝ գնահատականների հանրագումար):
Գնահատման ընթացքում հաշվի են առնվում.

- ✓ քննական տոմսերում ընդգրկված հարցերին պատասխանելը՝ 3 միավոր ($Մ_1$-ի, $Մ_2$-ի և $Վ_ք$-ի համար մեկական միավոր):
- ✓ մասնակցությունը դասընթացներին և քննարկումներին՝ 1 միավոր ($Մ_1$-ի, $Մ_2$-ի համար 0,25 ական միավոր,$Վ_ք$-ի համար՝ 0.5):
- ✓ գրավոր աշխատանքների ավարտը սահմանված ժամկետում՝ 1 միավոր ($Մ_1$-ի, $Մ_2$-ի համար 0,25 ական միավոր,$Վ_ք$-ի համար՝ 0.5):
- ✓ ուսանողական և գիտական այլ կոնֆերանսներին մասնակցելը և (կամ) զեկուցելը, գիտական հոդվածներ, ներկայացնելը՝ 2 միավոր:
- ✓ մասնակցությունը խմբային աշխատանքներին՝ 1 միավոր ($Մ_1$-ի, $Մ_2$-ի համար 0,25 ական միավոր,$Վ_ք$-ի համար՝ 0.5):

- ✓ համապատասխան իրավաբանական փաստաթղթերի ինքնուրույն սահմանված կարգով կազմելու հմտությունների դրսևորում՝ 2 միավոր:
- ✓ հետազոտության և գրագրության որակը՝ 1 միավոր:
- ✓ ֆինանսական իրավահարաբերություններ կարգավորող օրենսդրության վերլուծության կարողությունը՝ 1 միավոր :
- ✓ սահուն և գեղեցիկ բանավոր խոսքի ներկայացումը (հռետորական ճառը)՝ 1 միավոր:
- ✓ ինքնուրույն աշխատանք՝ 1 միավոր:
- ✓ անհատական աշխատանք՝ 1 միավոր:

Սովորողը համարվում է դրական գնահատական ստացած, եթե գնահատականների հանրագումարի արդյունքում ստացել է նվազագույնը 41 միավոր:

7. Ընթացիկ և եզրափակիչ գնահատման կազմակերպումը

1. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների/ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):
2. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցները կազմում են ֆակուլտետները, և հաստատվում են ուսումնա-հետազոտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնական վարչություն:
3. Ընթացիկ (միջանկյալ) քննություններն անցկացվում են ուսումնառության կիսամյակի 6-8-րդ և 16-17-րդ շաբաթների ընթացքում (տվյալ կիսամյակում պրակտիկայի առկայության դեպքում՝ ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի): Ընթացիկ քննության օրը ուսանողը չի ազատվում դասերից:
4. Եզրափակիչ քննությունները անկացվում են կիսամյակային քննաշրջաններում՝ 18-20-րդ շաբաթներում:

7.1 Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար Հյուսիսային համալսարանի ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար ընդունման պահից սկսած վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:
2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:
3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝
   - *գումարային կրեդիտների քանակը,*
   - *գնահատված/որակավորված կրեդիտների քանակը,*
   - *վարկանիշային միավորները,*
   - *միջին որակական գնահատականը:*

Ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող կիսամյակային ամփոփիչ տվյալների օրինակ.

h/h	Առարկայի անվանումը	Գնահատման եղանակը քնն./ստ.	Կրեդիտ	Թվային գնահատական	Տառային գնահատական
1	Հայ ժողովրդի պատմություն - 2	***քննություն***	2	85	**A-**
2	Հայոց լեզու - 2	ստուգարք	2		**S**
3	Ռուսաց լեզու - 2	ստուգարք	2		**S**
4	Օտար լեզու	ստուգարք	2		**S**
5	Ֆիզդաստիարակություն	ստուգարք			**S**
6	Էկոլոգիա	ստուգարք	2		**S**
7	Ֆիզիկա-1	***քննություն***	4	80	**A-**
8	Մաթեմատիկական անալիզ-2	***քննություն***	4	90	**A**
9	Դիսկրետ մաթեմատիկա-1	ստուգարք	2		**S**
10	Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ	ստուգարք	2		**S**
11	Ինֆորմատիկա-2	***քննություն***	4	70	**B**
12	Հաշվողական տեխնիկայի և ինֆորատիկայի մաթեմատիկական հիմունքներ-1	***քննություն***	4	84	**A-**
	Ընդամենը		**30**		

4. *Գումարային կրեդիտը* (Կ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է (օրինակում՝ Կ = ***30)***:

5. *Գնահատված (որակավորման) կրեդիտը* (ԳԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով (օրինակում ԳԿ = ***18)***.

$$\text{ԳԿ} = \sum \text{Կրեդիտ}$$

6. Վարկանիշային միավորը (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների կշռված գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար թվային գնահատականների արտադրյալների գումար.

$$\text{ՎՄ} = \sum \text{Կրեդիտ} \times \text{Գ}_{\text{արդ}},$$

որտեղ $\text{Գ}_{\text{արդ}}$-ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականնէ:

Օրինակում. 2 x 85 + 4 x80 + 4 x90 + 4 x70 + 4 x84 = 1466

7. Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100 –ի ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ԳԿ}}$$

Օրինակում. ՄՈԳ = 1466 /18 = 81՝ 100 հնարավորից

8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և լրացված (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

8. Կրթական ծրագրերի ավարտական պահանջները

8.1 Բակալավրի ծրագիր

1. Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար Հյուսիսային համալսարանի ուսանողը պետք է ծրագրի կատարման արդյունքում հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (առկա ուսուցման դեպքում ուսումնառության 8 կիսամյակների ընթացքում, հեռակա ուսուցման դեպքում՝ 10 կիսամյակների ընթացքում):
2. Բոլոր ուսանողները պետք է կուտակեն մինչև 42 կրեդիտ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ 2 կրեդիտ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), 8 կրեդիտ՝ մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից և առնվազն 22 կրեդիտ՝պրակտիկաներից և ամփոփիչ մասնագիտական քննություններից (ըստ մասնագիտությունների կրթամասերին հատկացվող կրեդիտների քանակը կարող է ունենալ շեղում):
3. Մնացած առնվազն 168 կրեդիտների բովանդակային կազմը (ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական դասընթացների կրթամասերից) սահմանվում է՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ բակալավրի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից:
4. Համալսարանում յուրաքանչյուր մասնագիտության համար, ըստ որակավորման աստիճանների, ավարտական քննությունների և ավարտական աշխատանքների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 3-ը:
5. Համալսարանում ամփոփիչ ատեստավորումը ներառում է գիտելիքների, կարողությունների ստուգման հետևյալ ձևերը՝
    - ամփոփիչ քննություն.

- ավարտական աշխատանքի (դիպլոմային աշխատանք կամ նախագիծ, մագիստրոսական թեզ) պաշտպանություն:

Ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների ցանկը որոշում է համալսարանը՝ ելնելով կրթական չափորոշիչների պահանջներից, այն ամրագրելով ուսումնական պլաններում:

6. Համալսարանում բակալավրի որակավորման աստիճանի համար ավարտական աշխատանքը պարտադիր չէ, նշված աշխատանքի անհրաժեշտության վերաբերյալ որոշումը ընդունում է համալսարանի գիտխորհուրդը:
7. Համալսարանում ամփոփիչ քննությունները կարող են անցկացվել բանավոր կամ գրավոր: Քննությունների հարցաշարերը և ավարտական աշխատանքի թեմաները կազմում են մասնա-գիտական ամբիոնները, հաստատում է համապատասխան ֆակուլտետի խորհուրդը: Հարցաշարերը համապատասխան ամբիոնը պարտավոր է շրջանավարտներին տրամադրել ոչ ուշ, քան ամփոփիչ ատեստավորումից 2 ամիս առաջ.

8.2 Մագիստրոսի ծրագիր

1. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար Հյուսիսային համալսարանի ուսանողը ծրագրի կատարման արդյունքում պետք է հաջողությամբ լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն (առկա ուսուցման դեպքում ուսումնառության 4 կիսամյակների ընթացքում, հեռակա ուսուցման դեպքում՝ 5 կիսամյակների ընթացքում):
2. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն առնվազն 8 կրեդիտ՝ ընդհանուր դասընթացների կրթամասից, և 48 կրեդիտ՝ գիտահետազոտական կրթամասից: Մնացած կրեդիտների (մինչև 64) բովանդակային կազմը սահմանվում է մասնագիտական պարտադիր կրթամասով և

կամընտրական դասընթացներով՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ մագիստրոսի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման պայմանից:

3. Համալսարանում մագիստրոսի որակավորման աստիճանի համար ավարտական (մագիստրական) աշխատանքի պաշտպանությունը պարտադիր է:

9. Ուսման առաջադիմությունը

1. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են՝ *առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա:*
2. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե՝
   - կիսամյակում ունի 30 կրեդիտ ուսումնական միջին բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով),
   - հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների կրեդիտները,
   - ապահովել է բակալավրի կրթական աստիճանի (ծրագրի) համար սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի նվազագույն շեմը՝ 41:
3. Ուսանողը համարվում է *փորձաշրջանի կարգավիճակում,* եթե չի բավարարել նախորդ կետում նշված պայմաններից որևէ մեկը:
4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:
5. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից: Հեռացված ուսանողի վերականգնումը

կատարվում է նույն կիսամյակում՝ ուսումնառության նախորդ ընթացքում վաստակած բոլոր կրեդիտների պահպանմամբ:

6. Ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են (ուսանողական նպաստներ, պետական, ներբուհական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս) նրանց միջին որակական գնահատականներով, իսկ միևնույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողներինը՝ վարկանիշային միավորներով:

10. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը

1. Հարգելի և ոչ հարգելի պատճառներով բացակայության դեպքերը չեն տարանջատվում ուսանողի գնահատման տեսանկյունից: Հաճախումները ամփոփվում են յուրաքանչյուր կիսամյակի վերջում:
2. Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն մինչև բուժման շրջանի ավարտին հաջորդող երկրորդ օրը ներառյալ, դեկանին սահմանված կարգի բժշկական տեղեկանքի ներկայացման դեպքում:
3. Հարգելի պատճառով ընթացիկ (միջանկյալ) քննությանը չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել մինչև հաջորդ ընթացիկ քննությունն ընկած ժամանակահատվածում՝ նախապես այն համաձայնեցնելով դեկանատի և դասավանդող դասախոսի հետ:
4. Հարգելի պատճառներով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողը կարող է վերահանձնել այն ակադեմիական պարտքերի մարման շրջանում:
5. Եզրափակիչ քննությունից «անբավարար» գնահատական ստացած կամ անհարգելի պատճառներով դրան չմասնակցած ուսանողը

ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում կարող է վերահանձնել այն, եթե տվյալ դասընթացից նրա արդյունարար գնահատականը (եզրափակիչ հարցմանը վաստակած միավորների և կիսամյակի ընթացքում հավաքած բոնուսային միավորների գումարը) փոքր է 41-ից:

11. Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետները կազմակերպում են կուրսային խորհրդատուների ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության կամ մասնագիտություն-ների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետներ:
2. Մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի կուրսային խորհրդատուների ընտրությունը կատարվում է դեկանների և ամբիոնի վարիչների կողմից, հաշվի առնելով դասախոսների և ուսանողների կարծիքը:
3. Կուրսային խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտություն-ների գծով և հսկում իրեն ամրագրված ուսանողների ուսումնական առաջընթացը նրանց ուսումնառության ողջ շրջանում:
4. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակեպում խմբային և անհատական խորհրդատվություններ, աջակցում է ուսանողների ներգրավվածությանը գիտահետազոտական, մշակութային և սպորտային միջոցառումների և աշխատանքների և այլն: